ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շախմատ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանքներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝

ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- **Ընտրովի պատասխանով** առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

  Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում դեպքում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:** Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

  Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

1) 1) Տրված դիրքում քայլը սպիտակներինն է, մատ երկու քայլից: Նշեք, թե սպիտակներն առաջին ճիշտ քայլը ո՞ր խաղաքարով պետք է կատարեն: (1 միավոր)

1) թագուհիով
2) փղով
3) արքայով
4) նավակով



Տրամագիր 1

Կարճ պատասխանով

2) **Տրված 7 պնդումներից գտնել բոլոր ճիշտ պնդումները և նշել նրանց համարները:** (1 միավոր)

1. Խաղադաշտի վրա ամենաշատը հնարավոր է տեղադրել 34 ձի, որ միմյանց չհարվածեն:

2. Նավակը դատարկ խաղադաշտի վրա ամենաշատը կարող է հսկել 14 դաշտ:

3. Դատարկ խաղադաշտի վրա, ձին a1 դաշտից c3 դաշտ կարող է հասնել ամենաքիչը 3 քայլից:

4. Խաղադաշտի փոքր կենտրոնում կա երկուական նույն գույնի դաշտեր:

5. Խաղադաշտի 4 եզրային գծերի բոլոր դաշտերի քանակը հավասար է 8-ի քառապատիկին, քանի որ յուրաքանչյուր հորիզոնական և յուրաքանչյուր ուղղաձիգ գիծ ունի 8 դաշտ:

6. Խաղադաշտի a1-a3-c3-c1-a1 դաշտերով սահմանափակված քառակուսին ունի 14 քառակուսի:

7. Դատարկ խաղադաշտի վրա ամենաքիչը հնարավոր է տեղադրել 6 թագուհի այնպես, որ միմյանց չհարվածեն:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Շախմատ» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լիա Մարտիրոսյան, Սամվել Միսակյան, Նաիրա Մովսիսյան

Շախմատ 2 դասագիրք 2023 թ.

2. Լիա Մարտիրոսյան, Նաիրա Մովսիսյան Շախմատ 3 դասագիրք 2024 թ.

3. Համլետ Թումանյան Շախմատ 4 դասագիրք 2023 թ.

4. Համլետ Թումանյան Շախմատ 4 վարժությունների տետր 2023 թ.

5. Համլետ Թումանյան Շախմատ 2 Ուսուցչի ձեռնարկ 2012 թ.

6. Համլետ Թումանյան Շախմատ 3 Ուսուցչի ձեռնարկ 2012 թ.

7. Համլետ Թումանյան Շախմատ 4 Ուսուցչի ձեռնարկ 2013 թ.

8. Սամվել Միսակյան Շախմատ 2-4 -րդ դասարաններ Ուսումնամեթոդական ձեռնարկ 2018 թ.

9. А.А. Тишков В. И. Чепижный Шахматные задачи- миннатюры Москва 1987

10. С. Иващенко CHESS SCHOOL 1b Учебник шахматных комбинаций Москва 2007

11. В. Голенищев Программа подготовки шахматистов II-III разрядов Москва 2011

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: